

ՄԻ ԴՐՎԱԳ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՄԵՍՐՈՊ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Արամ Հովհաննիսյան

Ժամանակակից Գերմանիայի տարածքում հայեր սկսել են բնակություն հաստատել 14-15-րդ դարերում, թեև գերմանական աղբյուրների վկայմամբ առաջին հայը Գերմանիայում հաստատվել է շատ ավելի վաղ՝ 11-րդ դարի վերջին: Խոսքը հայ արքեպիսկոպոս Գրիգորիսի մասին է. ուրը 1071 թ. հաստատվեց Բավարիա քաղաքի մոտ գտնվող Նիդեռնբուրգ վանքում և այստեղ էլ մահացավ 1093 թ.¹: Ուշ միջնադարում մի շարք գերմանական իշխանություններում (Բավարիա, Սաքսոնիա, Պֆալց) հայ վաճառականներն ունեցել են սեփական տներ: Հայ-գերմանական հարաբերությունները զարգացում են ապրել 12-13-րդ դարերում: Գերմանիան Եվրոպական առաջին պետություններից էր, որ կապեր է հաստատել Կիլիկյան Հայաստանի հետ²: Գերմանիայի հետ է կապված հայ ազատագրական շարժման գործիչ Իսրայել Օրու գործունեությունը:

Հայտնի է, որ ժամանակի ընթացքում Արևմտյան Եվրոպայի տարբեր երկրներում ստեղծվել էին մի շարք հայկական գաղթօջախներ և ուսումնական կենտրոններ: Դրանց մի մասը ժամանակի ընթացքում նշանակալի դերակատարում է ունեցել հայագիտության տարբեր ոլորտների զարգացման գործում և հետագա դարերում հայագիտական կենտրոնների հիմնումն ու բուռն գործունեությունը շարունակվեց :

20-րդ դարում հայագիտությունը շարունակում էր զարգանալ նաև Հայաստանի սահմաններից դուրս, մասնավորապես՝ Եվրոպական երկրներում: Հատկապես հիշատակելի է Գերմանիայի Դաշնության Սաքսոնիա Անհալտ երկրամասի Հալլե-Վիտենբերգի Մարտին Լյութերի անվան համալսարանին կից ստեղծված «Մեսրոպ» հայագիտական հետա-

¹ Հայկական սփյուռքի հանրագիտարան, Երևան, 2003, էջ 136:

² Տե՛ս Հայոց պատմություն, հատոր երկրորդ, միջին դարեր, ակադեմիական հրատարակություն, Երևան 2014, էջ 351-353, Հայ ժողովրդի պատմություն, խմբագրությամբ Ս. Մելիք-Բախշյանի, Երևան, 1976, էջ 520-525, Գ. Միքայելյան, Կիլիկիայի հայկական պետության պատմություն, Երևան, 2007, էջ 156-165:

զրտությունների կենտրոնը, որի հիմնադիրն անվանի հայագետ, գիտության նշանավոր գործիչ Հերման Գոլցն է: Հիրավի մեծ է եղել այս նշանավոր գիտնականի ավանդը թե՛ «Մեսրոպ» հայագիտական կենտրոնի բացման, թե՛ նրա գործունեության առաջին շրջանի, և թե՛ ընդհանրապես նորագույն ժամանակների հայ-գերմանական հարաբերությունների զարգացման գործում:

«Մեսրոպ» հայագիտական կենտրոնը բացվեց 1998 թ¹: Բացի Հերման Գոլցից դերակատարում ունեցան նաև Գերմանիայում բնակվող հայագիտական անվանի հայագետներ պրոֆեսոր Արմենուի Դրոստ-Աբգարյանը, Ռաֆֆի Գազերը (Խաչիկ Լազարյան) և մի քանի այլ գիտնականներ: Նպատակն էր հայկական մշակույթի ուսումնասիրությունը, ինչպես նաև նրա ծանոթացումը գերմանախոս լայն հասարակությանը, հայ և գերմանացի հայագետների համագործակցության սատարումը և այլն: «Մեսրոպ» կենտրոնի հիմնական գործառույթներից մեկը դարձավ նաև Հայաստանի Հանրապետության հետ Գերմանիայի Դաշնության և հատկապես Սաքսոնիա Անհալտ երկրամասի գիտակրթական և մշակութային կապերի ամրապնդումը և ընդլայնումը, փոխանակման ծրագրերի իրականացումը: Այս կենտրոնը տարիներ շարունակ զբաղվում է հայ դասական գրականության, բանասիրության, աստվածաբանության, կրոնագիտության, Հայ եկեղեցու պատմության և այլ կարևոր բնագավառների ուսումնասիրությամբ:

Կենտրոնը բացումից ի վեր համագործակցում է Գերմանիայի Դաշնության և Հայաստանի Հանրապետության գիտահետազոտական, կրթական և մշակութային մի շարք հաստատությունների, ինչպես նաև պետական և հասարակական մի շարք գործիչների հետ: «Մեսրոպ» հայագիտական կենտրոնը հատկապես սերտ կապեր ունի Երևանի պետական համալսարանի աստվածաբանության ֆակուլտետի, Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարանի, ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի և այլ գիտահետազոտական հիմնարկությունների հետ: Տարեցտարի այդ հարաբերություններն ավելի են զարգանում:

Անցած տարիների ընթացքում «Մեսրոպ» հայագիտական հետազոտությունների կենտրոնը բավական ակտիվ գործունեություն է ծավալել

¹ Ա. Խաչատրյան, ՀՀ-ի և ԳԴՀ-ի միջև կրթամշակութային դրվածքը ներկա փուլում, Կանթեղ, 2008, N 2, էջ 138-148:

թե՛ Գերմանիայում, և թե՛ նրա սահմաններից դուրս: Մասնավորապես, կենտրոնի անմիջական նախաձեռնությամբ հրատարակվել են մի շարք գրքեր, կազմակերպվել են միջազգային գիտաժողովներ, որոնց մասնակցել են հայ և օտարազգի ճանաչված գիտնականներ, մշակույթի գործիչներ և այլ անձինք աշխարհի տարբեր վայրերից: Կենտրոնը կազմակերպել է նաև ամառային գիտակրթական դասընթացներ, ցուցահանդեսներ, հայկական մշակութային օրեր Գերմանիայի Դաշնությունում և մի շարք այլ միջոցառումներ Հայաստանում, որոնք անցել են բավական աշխույժ մթնոլորտում:

«Մեսրոպ» կենտրոնի նախաձեռնությամբ 2008 թ. Մարտին Լյութեր համալսարանի և Երևանի պետական համալսարանի միջև կնքվեց համագործակցության պայմանագիր, որի շրջանակներում հաջողությամբ իրականացվում են հետազոտողների փոխանակման ծրագրեր Հայաստանի հանրապետության և Գերմանիայի Դաշնության միջև:

Պետք է նշել, որ վերջին 10-15 տարիներին երկկողմ հարաբերությունների զարգացման գործում մեծ ներդրում ունի նաև Երևանի պետական համալսարանի աստվածաբանության ֆակուլտետի դեկան, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Անուշավան Եպիսկոպոս Ժամկոչյանը: Նա ժամանակին սովորել է Մարտին Լյութերի անվան համալսարանում և նրա անմիջական նախաձեռնությամբ երկկողմ կապերը ավելի են զարգացել, տեղի են ունեցել Երևանի պետական համալսարանի մի շարք գիտնականների այցեր Հալլե-Վիտենբերգի «Մեսրոպ» հայագիտական կենտրոն, որտեղ քննարկվել են համագործակցության ապագա հեռանկարները: Հենց Անուշավան Եպիսկոպոս Ժամկոչյանի և «Մեսրոպ» հայագիտական հետազոտությունների կենտրոնի նախաձեռնությամբ 2015 թ. սեպտեմբերի 18-19-ը Երևանի պետական համալսարանում անցկացվեցին «Հայ-գերմանական հարաբերությունների վերջին 100 տարին» խորագրով միջոցառումներ¹, որոնց աջակցեց նաև գերմանական կառավարությունը: Այդ միջոցառումներին իրենց ակտիվ մասնակցությունը ցուցաբերեցին ոչ միայն Հալլե-Վիտենբերգի Մարտին Լյութերի անվան համալսարանի և «Մեսրոպ» հայագիտական կենտրոնի գիտնականները, այլև բազմաթիվ հայ և գերմանացի պրոֆեսորներ և

¹ Գերմանահայկական հարաբերություններ. ավելի քան 100 տարի, Ազգ. օրաթերթ, օգտվել ենք www.azg.am կայքից, վերցված է 12.05. 2021 թվականին:

դասախոսներ Գերմանիայի տարբեր քաղաքներից ու համալսարաններից, գիտական կենտրոններից: Բացի այդ, միջոցառումներին իրենց մասնակցությունը ցուցաբերեցին Հայաստանի Հանրապետությունում Գերմանիայի Դաշնության դեսպանատան պատվիրակները, իսկ կոնֆերանսի բացման խոսքն ասաց ԵՊՀ գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Գեղամ Գևորգյանը:

Ինչպես արդեն նշեցինք, «Մեսրոպ» հայագիտական հետազոտությունների կենտրոնի հիմնադրումը և գործունեության առաջին շրջանը կապված է հայտնի հայագետ և աստվածաբան Հերման Գոլցի անվան հետ, որը նաև Մարտին Լյութերի անվան համալսարանի աստվածաբանության ֆակուլտետի դեկանն էր: Իր գիտակցական կյանքի մեծ մասը այս շնորհալի գիտնականը նվիրեց հայ ժողովրդի պատմության, մշակույթի և գիտության ուսումնասիրությանը: Լավագույն վկայությունը Հերման Գոլցի ուսումնասիրություններն են, զեկույցները՝ միջազգային գիտաժողովներում, կոնֆերանսներում և այլուր: Վերջինիս հաջողվեց հայկական հարցի լուծմանը մասնակից դարձնել բազմաթիվ քաղաքական և մշակութային գործիչների: Հերման Գոլցի նախաձեռնությամբ 2000 թ. սեպտեմբերին Հալլե-Վիտենբերգում տեղի ունեցավ, «Հայաստան 2000» միջազգային գիտաժողով, իսկ նույն թվականի սեպտեմբերից նոյեմբեր ամիսներին անցկացվեց ցուցահանդես, որը կրում էր «Կիլիկիահայերի փրկեալ գանձարանը» խորագիրը: Եվ ընդհանրապես, մեծ է նրա վաստակը նաև գերմանացի ընթերցողներին և մտավոր շրջանակներին Հայաստանյաց Առաքելական Եկեղեցու աստվածաբանության, հայոց հոգևոր մշակույթի գանձերի ծանոթացման գործում: Հատուկ ուշադրության արժանի է այն, որ Հերման Գոլցը 2005 թ. մասնակցել է Բունդեսթագում տեղի ունեցած հայոց ցեղասպանության բանաձևի քննարկմանը:

Հերման Գոլցը մահացավ 2010 թ. դեկտեմբերի 9-ին, որը մեծ հարված էր թե՛ Մարտին Լյութեր համալսարանին, թե՛ «Մեսրոպ» կենտրոնին, և թե՛ հայ-գերմանական հարաբերություններին: Այս ակնառու գործչի կատարած դերը չմոռացվեց և արժանիորեն գնահատվեց Հայաստանում: Մասնավորապես, Երևանի պետական համալսարանում 2015 թ., ի երախտագիտություն Հերման Գոլցի, աստվածաբանության ֆակուլտետի լսարաններից մեկն անվանվեց նրա անունով: Հերման Գոլցը հայագիտությանը մատուցած իր բացառիկ ծառայությունների համար պարգ-

լատրվել է ՀՀ կառավարության, Հայ Առաքելական Եկեղեցու Պատվի շքանշաններով, Հայ բարեգործական ընդհանուր միության Կարպիս-Փափագյան մրցանակով, ինչպես նաև՝ նա արժանացել է ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչման¹:

«Մեսրոպ» հայագիտության կենտրոնը հաջողությամբ շարունակեց իր գործունեությունը 2010 թ. հետո, երբ կենտրոնի ղեկավար դարձավ Արմենուհի Դրոստ-Աբգարյանը, մարդ, որ մեծապես նվիրված է իր գործին և լինելով ակնառու գիտնական, բարի անձնավորություն և ճանաչված հայագետ՝ կարողացավ հաջողությամբ շարունակել այն ավանդույթները, որոնք գալիս էին դեռ Հերման Գոլցի ղեկավարման տարիներից: Վերջին տարիներին պրոֆեսոր Արմենուհի Դրոստ-Աբգարյանը ևս ջանքեր չի խնայում վերը նշված կենտրոնի գործունեությունը ակտիվացնելու և զարգացնելու ուղղությամբ:

2018 թ. հոկտեմբերի 19-ին Մարտին Լյութերի անվան համալսարանում տեղի ունեցավ «Մեսրոպ» հայագիտական կենտրոնի 20-ամյա հոբելյանին նվիրված միջոցառում, որին ներկա էին նաև ՀՀ Կրթության նախարարը, Գերմանիայում ՀՀ դեսպանը, երկրամասի գիտության և տնտեսության պետքարտուղարը և բազմաթիվ այլ հյուրեր: Այդ օրը «Մեսրոպ» կենտրոնի ղեկավար Արմենուհի Դրոստ Աբգարյանը պարգևատրվեց ՀՀ ԿԳՆ ոսկե մեդալով:

Այսօր էլ «Մեսրոպ» կենտրոնի աշխատակիցները համագործակցելով մայր հայրենիքի գիտական կենտրոնների հետ, կազմակերպում են գիտական կոնֆերանսներ, իրականացնում են հրատարակչական և այլ աշխատանքներ: Բոլորովին վերջերս «Մեսրոպ» կենտրոնի և ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի համագործակցությամբ հրատարակվեց աստվածաբանության վերաբերյալ կարևոր դասագիրք²: Մոտ ժամանակներս նախատեսվում են մի շարք այլ գրքերի հրատարակություններ ևս: Պետք է նշել, որ թեև Հերման Գոլցի մահվանից հետո վերը նշյալ կենտրոնի լիազորությունները որոշակիորեն սահմանափակվել են, անո-

¹ Ա. Դրոստ-Աբգարյան, Հերման Գոլց (1946-2010), Բանբեր Երևանի համալսարանի, 134.1, Երևան, 2011, էջ 77-79:

² **Ռայնհարդ Թյոլե**, Անուշավան Եպս.ժամկոչյան, Արմենուհի Դրոստ Աբգարյան, Հայագիտական ուսումնական ձեռնարկ աստվածաբանության ֆակուլտետների համար, Հատոր, Ա., Երևան-Հայկ-Վիտենբերգ, 2017:

ամենայնիվ այսօր էլ կենտրոնը և նրա աշխատակիցները Արմենուիի Դրոստ-Աբգարյանի գլխավորությամբ պահպանում են իրենց կապերը Հայաստանի հետ: Հատկապես մեծ է նրանց դերը Հայաստանի Հանրապետությունից Գերմանիա ժամանած հայ ուսանողների աջակցության հարցում: Միաժամանակ գիտահետազոտական կենտրոնը խիստ կարևոր դեր է կատարում թե՛ հայ-գերմանական հարաբերությունների զարգացման ոլորտում, թե՛ Հալլե-Վիտենբերգի հայ համայնքի կյանքում:

Բանալի բառեր: *Կենտրոն, հայագիտություն, Հալլե-Վիտենբերգ, Գերմանիա, Հայաստան, գիտնական, գաղթօջախ, հետազոտություն, կոնֆերանս, հայ-գերմանական, Մերոպ, ԵԴՀ:*

ОДИН ЭПИЗОД ИЗ ИСТОРИИ АРМОНОВЕДЧЕСКОГО ЦЕНТРА "МЕСРОП" ГЕРМАНИИ

Арам Оганнисян

Ключевые слова: *центр, арменоведение, Галле-Виттенберг, Германия, Армения, научный, колония, исследование, конференция, армяно-немецкий, Месроп, ЕГУ.*

Статья посвящена арменоведческому центру "Месроп", созданному при университете имени Мартина Лютера федеральной земли Саксония-Анхальт Германии. В статье описана история открытия арменоведческого центра "Месроп", некоторые эпизоды из деятельности его первого руководителя выдающегося ученого Германа Гольца. Представлена история проармянской деятельности арменоведческого центра "Месроп" за прошедшие годы, в частности организованные конференции, издания, связи с Родиной и другие важные события. Работа касается также деятельности центра "Месроп" и его нового руководителя Арменуи Дрост-Абгарян после смерти Германа Гольца и тех проблемах, которые сегодня стоят перед центром.

AN EPISODE FROM THE HISTORY OF THE "MESROP" CENTER FOR ARMENIAN STUDIES OF GERMANY

Aram Hovhannisyan

Key words: *centre, armenology, Halle-Wittenberg, Germany, Armenia, scientist, colony, research, conference, Armenian-german, Mesrop, YSY.*

The article is dedicated to the "Mesrop" center for armenian studies established at the University of Martin Luther in Saxony-Anhalt, Germany. The article describes the history of the opening of the "Mesrop" center for Armenian Studies, some episodes of the activity of its first head, great scholar Herman Goltz. The article puts the stress on the activity that the centre has carried out in the field of armenology by holding conferences, publishing, relations with the homeland and fulfilling other important activities. At the end of the article a special notification is given to the "Mesrop" center and the activity by Armenuhi Drost-Abgaryan, who after the death of Herman Golts successfully continues the realization of the started activities and pays great attention to the problems that still stand in front of the center.